



Լեւոնի քաղաւորութիւնը



այերը մեծ սխալ մը գործած էին , եւ պէտք էր որ հետեւանքն ալ կրէին :

Այդ սխալն էր՝ օտարներու վրայ յոյս դնելով « քրիստոնեայ » արեւմտքի հետ անգաղար եւ անօգուտ թղթակցութիւններ կատարել , անտես ընելով կարեւորութիւնը մեր մօտակայ բայց « անհաւատ » զրացիներու բարեկամութեան , զոր Հեթում Ա. մշակած էր : Ուստի բնական էր որ մեր զօրաւոր թշնամիին նախանձը զրգուէր եւ արիւնոռչտ յարձակումներու թատր դառնար Հայաստան : Այս անհետատեսութեան երեսէն էր նաեւ , որ մինչեւ իսկ հայկական գահին վրայ բերին նստեցուցին ազգով ու դաւանանքով օտար մարդիկ , որոնք , ցաւալի է հաստատել , իրենց յանձնուած բարձր պաշտօնին ծառայելէ աւելի՝ հետամուտ էին պապական պրոպականդի ու դաւանաբանական խնդիրներու . . .

Այսպէս բրաւ Լեւոն ալ :

Երբ Հայերը կը խնդրէին Լեւոնէն , որ բարեհաճի մե'ր կաթողիկոսին ձեռքովը թագաւոր պսակուի , ան կը պատասխանէր — « Մեր հնազանդ եմք եկեղեցւոյն Հռոմայ եւ ունիմք զկաթողիկէ հաւատս , զոր պարտ է եւ ձեզ ունել » (Գարգել եր. 113) : Այս չկշռուած՝ չմտածուած եւ խորթ խօսքերուն հետեւանքը կարելի էր գուշակել նո'յն օրէն իսկ , առանց սպասելու դա՛նն վախճանին :

Ստոյգ է որ Լեւոն ուզե'ց Հեթում Ա.-ի օրինակին հետեւիլ՝ իմանալով որ մինչեւ իր գալը նո'յն քաղաքականութեան հետեւած են չորս խնամակալները . բայց այս քաղաքականութիւնն այլ եւս բռնի էր եւ սխիպողական . գործին մէջը հեռատեսութեան նշոյն անգամ չկար . վասն զի երկու թուրք իշխաններ , Գաւուզ բէկ եւ Սըրուբէքը , իւրաքանչիւրը տասնմէկ հազար զօրքով , Սսի ճանրան բռնած՝ կսպառնային սովամահ ընել ամբողջ